

սուր և քիչ մը ծռած են , և խայթող ակռաներուն կէսին չափ հազիւ կան . աչուները մանր ու քիչ մը դուրս ցըցուած են , վարի ծնօտը՝ վերինէն պրզ տիկ է , ու թունչը կտոր . երկայնութիւնը գրեթէ 6, 7 ոտնաչափ է , իսկ մէջքին բոլորտիքը չորս բթաչափ . բովանդակ մարմինը հակըթաձեւ մանր թեփով ծածկուած է , և ընդհանրապէս փորուն տակը ճերմակ , իսկ վրան դեղնագոյն կամ մոխրագոյն է՝ տեղ տեղ երկնագոյն բծերով : Ենթադրուած թիւն մէկ զարմանալի յատկութիւնն ալ այս է որ , կիրք ելած ժամանակը վզին մորթը կ'ուռի և գլուխը անոր մէջ կը մտնէ կ'ելլէ . աս ուռած մորթին վրայ է ակնուցի ձևով գծուածքը , որուն չորս դին լայն ու սև մանեակ մըն ալ կայ : Այս օձը երբոր հեռուէն թշնամի տեսնէ , մէկէն կը շտկուի , կ'երկըննայ ու կրակոտ աչուները միակերպ ասդիս անդին կը դարձնէ , վիզը կ'ուռեցնէ , բերանը կը բանայ և պոչը տատանելով կը սկսի թշնամոյն վրայ երթալ : Եւս օձէն խայթողներէն խիստ քիչը մահուանէ կը խալըսին . շատ փորձերով հաստատուած է՝ որ ասոր խածուածքովը շները քսան կամ քսանը հինգ վայրկենի մէջ կը մեռնին , և վառեակները մէկ ու կէս վայրկենի մէջ . և երբոր կը թունաւորուին՝ կը սկսին խեղճ ձայներ հանել , չէն կրնար ոտքի վրայ կենալ ու շունչ առնել . վրանին դող կուգայ , կը փրփրան , անդամներն իրար կ'անցնի , ետքը վրանին թմրութիւն մը կուգայ ու քիչ ատենէն կը մեռնին :

(Եկէտ և այսչափ վտանգաւոր է աս օձին մօտենալը , բայց Հնդկաստան թովիչներ կան՝ որ զասոնք կ'ընտանէցընեն ու կը պարծենան թէ իրենց նուագարանով ան օձերը զսպելու զօրութիւն ունին , նաև անոնց խածուածքին գէմ զանազան սուտ դեղեր կը ծախեն . երբեմն ալ կամօք թող կուտան օձին որ զիրենք խածնէ . բայց առաջուց անոր բոլոր թունաւոր ակռաները հանած են : Եւ մարդիկները ամէն օր հրապարակներու մէջ գետնի վրայ կրծ-

կրտած , ձախ ձեռուներն եղէգէ սրինգ մը բռնած՝ կը բանան իրենց կողովները՝ որոնց մէջէն օձերը ինքնիրենց դուրս կ'ելլեն . և քանի որ սրնգին ձայնը կ'առնեն կամաց կամաց կը տնկուին , կը նետուին , աչուներն իրենց տիրոջը վրայ տնկած կը նային , և եղանակին աստիճանին համեմատ՝ իրենք ալ կաբաւելու պէս՝ կը շարժին , և տէրերնին ալ ձեռքով ինչ շարժմունք որ կ'ընէ՝ անոր կը հետեւին : Եւ կը կը պատմէ թէ երբ որ տան կամ պարտեղի մը մէջ աս տեսակ օձ մը մոնալով զամէնքը անհանգիստ ընէ , տանուտէրը թովիչ մը կ'երթայ , որպէս զի զիրենք խալըսէ ան վախէն . թովիչը կուգայ ու իր արուեստովը այնչափ կ'ընէ՝ որ օձը կուգայ ոտքին քով կը սկսի սողալ . ան ատեն ձեռքով կը բռնէ կը վերցընէ օձը առանց վտանգի , և ամենայն կերպով կը զգուշանայ զանիկայ սպաննելէն , վասն զի Հնդկաստանցւոյ մէջ սրբազան կենդանի սեպուած է : Իսկ Սալապարի մէջ նաև կը պաշտեն զասիկայ . և տաճարներու մէջ դրած՝ իրեն ընծաներ կը բերեն , և առջևը աղօթք կ'ընեն : Պրահմաները , որ Հնդկաստանցւոյ քուրմերն են , այս օձին անուամբը երդմնեցուցութիւն կ'ընեն . և պաշտօնասէր մարդիկներ անոր կաթ կամ ուրիշ ուտելիքներ կը տանին անտառներն ու դաշտերը , ուր որ շատ կը գտնուի :

Դիողինէսի հարցեալ թէ որ 'ի գազանաց չարաշար խածանէ , ասէ . Ի վայրենեաց՝ օձ և ինձ . և յընտանեաց՝ շոգմոգ և զրպարտող :

ՈՍԿԻՓՈՐԻԿ